

NEUERSCHIENENE BÜCHER

(dankend erhalten)

Khatchadurian Paren Aramovitch, Teatralno-Dekoratzionnoe iskustvo Sovetskoi Armenii. Moskva, Izobrazitelnoe Iskustvo, 1979, p. 136.

Kouymjian Dickran, Illustrated armenian manuscripts to the year a. D. 1000. Athinaï, 1979, p. 249—252.

Kzirian Andrew, Armenian Bilingual Program. Watertown, Public Schools, 1979, p. 19.

Lepsius D., Dr. Johannes, Der Todesgang des Armenischen Volkes. Heidelberg, 1980, S. 315.

Les Monuments de l'Architecture Arménienne. Direction du tourisme étranger. P. 36.

Mahé Jean-Pierre, L'Etude de P. M. Muradian sur les Inscriptions Géorgiennes d'Arménie. Revue de Kartvelologie, vol. XXXVIII. Paris, 1980, p. 295—309.

Memorandum über die armenische Frage. Erarbeitet vom Armenischen Studentenbund in Europa. S. 16.

Mercier Charles, Quaestiones et solutiones in Genesim, I et II e versione armeniaca. Paris, Editions du Cerf, 1979, p. 336.

Michael J. Arlen, Embarquement pour l'Ararat, à la recherche de l'identité arménienne. Gallimard, 1977, P. 252.

Michael E. Stone, Signs of the Judgement, Onomastica Sacra and the Generations from Adam. Armenian Texts and Studies 3. University of Pennsylvania, 1981, p. 277.

Minassian Martiros, Grammaire d'arménien oriental. Delmar, New York, Caravan Books, 1980, p. 373.

Mirzaian Father Aramais, Armenians: A pilgrim people in „Tierra Australia“, Sydney, 1975, p. 209.

— Armenians in Australia. Sydney, 1976, p. 115.

— The Wandering Armenians. Sydney, 1980, p. 116.

L. M. Mkrttchiana. Poeti Armenii. Leningrad, 1979, p. 591.

Mnatzakanyan Stepan, Architectural Monuments in S. Armenia, Yerevan, Institute of Arts, Academy, 1980, p. 48.

Mnatzakanyan Stepan et Nonna Stepanian, Monuments d'architecture en Arménie Soviétique. Erevan, 1981, p. 52.

Mzekala Shenidze, Drevnegruzinskie pervodi, knigi psalmov. Tbilisi, izdat. Meznireba, 1979, S. 231.

Nercessian Vrej, Catalogue of early armenian Books 1512—1850. London, the British Library Board, 1980, p. 180.

Nickel Heinrich L., Byzantinischer Kunstexport. Halle-Wittenberg, 1978, S. 309.

Ohanian Pascual C., La Cuestion Armenia y las Relaciones internacionales. Tomo I. 1839—1896. Buenos Aires, 1975, p. 467.

Opissanie Gruzinskich Rukopissei, Sinaiskaja Kollekcija, Tbilisi, izdat. Meznireba, 1978, S. 249.

— Tbilisi, izdat. Meznireba, 1979, S. 334.

Ordjanian Anahid V., Armenia Crossroads of Cultures. New York, Columbia University, 1980, p. 36.

Ormandjian Agop, Inventaire des Sources armeniennes sur l'histoire Balkanique. Balkanica II. Sofia, 1980, p. 98.

Otto Meinardus, An armenian Jerusalem Proskynitarion in New Julfa. Offprint of „Studii Biblic Franciscani Liber Annuus“ XXI, 1971, p. 180—193.

Papazian Garabed, Mesrop Mashtots the Inventor of the armenian Alphabet and the first Teacher of the Armenian People. Beirut, Technopresse moderne, 1979, P. 157.

Papazian Seta, La goutte de miel. d'après un conte arménien de Hovhannes Toumanian. Requevaire — Parenthèses, 1980, p. 30.

Pedersen Holger, Kleine Schriften zum Armenischen. Hildesheim, New York, Georg Olms Verlag, 1982, S. 336.

Persica. Sur le Destinataire de la Lettre au Roi des Perses et la Conversion de l'Arménie à la Religion Chrétienne. No. VIII., 1979, p. 99—116. Nederland.

Sarkissian Robert, International Year of the Child, Director's annual Report, 1979. Beirut, the Howard Karagheusian Commemorative Corporation, 1980, May 22nd, p. 80.

— Director's annual Report 1980. Beirut, 1981, p. 31.

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՂԶ. ՏԱՐԻ 1982

### ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԸՐԹԵՒԻ

Զմեմուրի վանքի միաբան Պետրոս Քեմտիր-նեան վարդապետի՝ վաղամեռիկ դասընկեր բարեկամիս մշտաժպիտ յիշատակին

Երբ Զմեմուրի վանքի մատենադարանի վարիչն էր, խնդրել էի, որ այս գրուածքը լուսապատճենումն ինձ ուղարկի հրատարակութեան համար, անտեղեակ լինելով, որ նա հիւանդանոցում պայքարելիս է եղել անողորմ եւ վերջնական հիւանդութեան դէմ: Նրա հոգեհանգստեան դոյժը յայտնելով՝ Մանուէլ Գեղ. Պաթաղեանը՝ մեր երկուսի էլ դատարկեց եւ Միւրանութեան վանհայրը, կատարեց փափազս. շնորհակալութիւն, եւ թող լինի մեզանից բաժանուած մշտաժպիտ ընկերոջ յիշատակին:

Գրուածքը վանքի մատենադարանի թ. 183 (հին թ. 202) ձեռագրի վերջում է, էջ 83ա—88բ: Ձեռքը, որ Դատաստանագիրք կամ Օրէնագիրք է, 1639 թ. է ընդօրինակուել, գրիչը, պատուիրատուն ու վայրն անյայտ: Մեր գրուածքի վերջում գրիչը թողել է հետեւալը. «Աւգնականութեամբն Աստուծոյ կատարեցաւ Դատաստանագիրքս այս. թվ. ՌՁԸ [1639] եւ օգոստոս ամսոյ իդ. (պատիւով) օրն գըրթի (պատիւով)»: Ձեռագրի նկարագրութիւնը տես Մեսրոպ Վրդ. Քէչեշեան, «Յուցակ հայերէն ձեռագրաց Զմեմուրի վանքի մատենադարանին», Վիեննա, 1964, հատ. Ա., էջ 431—433: Նիւթը սովորական հաստ եւ անողորմ թուղթ է, գիրը՝ դիւրընթեանելի նոսր գիր, երկսիւն, երկու սիւնակներով միջեւ 1,8 սմ լայնութեամբ դատարկ ներքի միջեւ 1,8 սմ լայնութեամբ դատարկ երեք ուղղահայեաց դժերով, ձախ լուսանցքն ունի ուղղահայեաց երկու գիծ, աջը՝ մէկ: Թերթերը մասամբ զործածութիւնից եւ մեծ մասամբ խոնաութիւնից տեղ-տեղ բծա-

ւորուել ու թեթեւօրէն սեւացել են, բայց բոլոր տառերը լրիւ ընթեանելի են այս գրուածքում:

Ուղղագրութիւնը կանոնաւոր է, գործածուել են և ու օ, սակայն մի քանի անգամ նախկին աւ—ը պահպանուել է: Բառերին փոխարինող նշանադրեր չկան: Յապաւումները, որոնք հետեւողական եւ կանոնաւոր են, ամենից սովորականներն են: Հարցումն ու Պատասխանի բառերին յաջորդող բառն սկսուել է գլխագրով, այլուր մեծատառեր գրեթէ չկան: Կէտաղբութիւնը միանգամայն կամայական է. գործածուել են՝ վերջակէտը քիչ, ստորակէտը է՛լ աւելի քիչ եւ միջակէտը, որ ամենից առատն է: Ենթամայի փոխան գործածուել է ստորակէտը: Բացառական նշանը, որ հազուադէպ է, փոխարինում է հարցականին, որ մէկ անգամ կայ: Բառերն առողանութեան համար շեշտագրուել են, բայց շեշտը գրուել է վերջին վանկի ոչ թէ ձայնաւորի, այլ բաղաձայնի վրայ: Բնագիրը հրատարակում ենք նոյնութեամբ, սակայն մեր կէտաղբութեամբ եւ մի քանի անգամ միայն [ ] ներում կատարելով ուղղագրական փոփոխութիւն, ձեռագրայինը նշելով էջատակում: Պարբերացումը մերն է:

Այս գրուածքն առաջին անգամ լոյս ընծայեց Ն. Ադոնցը (Revue d l'Orient chrétien, 3e série, tome V (XXV), 1925—1926, No. 3 et 4)՝ հրատարակ հանելով էջմիածնի (այսօր Մաշտոցեան Մատենադարանի) չորս ձեռագրի հիման վրայ Գ. Տէր Մկրտչեանի պատրաստած բնագիրը, սակայն ընտրութիւն կատարելով այլընթերցուածների միջից: Նա

Համոզուած է եղել, թէ այս գրուածքը եզրնիկ կողբացու երկի հայերէն մի աղբիւր է, քանի որ, նրա կարծիքով, գրուածքի հեղինակը Գրիգոր Լուսաւորչին է, որ յունարէն է շարադրել, եւ գրերը ստեղծուածից յետոյ թարգմանուել է դասական գրաբարով: Հանգուցեալ Լեւոն Պաշտմանը Աղոնցի բնագիրը վերահրատարակեց առանց տարընթերցումներէ, ինչն էլ համարելով եզրնիկ հայերէն մի աղբիւր, բայց վերագրելով Մեսրոպ Մաշտոցին («Բանբեր Մատենադարանի», 1964, 7, էջ 315—328): «Գրիգոր Պարթեւին կամ Մեսրոպ Մաշտոցին վերագրուած Հարցումը եւ եզրնիկ կողբացի» մեր ուսումնասիրութեան մէջ (ՀԱ, 1971—1973, մօտ 100 էջ) փորձեցինք ապացուցել, որ այս գրուածքը միջնադարում մեծ մասամբ քաղուած է եզրնիկից: Լ. Պաշտմանը «Օտարալեզու հայ գրականութիւնը չորրորդ դարում» յօդուածում (ՊՀ, 1973, 3, էջ 27—50) գրուածքն այս անգամ վերագրեց Լուսաւորչին, բայց դար-

ձեալ պնդեց, թէ եզրնիկ հայերէն մի աղբիւր է: Նա ցոյց էր տուել, որ նոյն գրուածքը գտնուած է նաեւ Մատենադարանի թ. 9298 Ձեռ-ի էջ 302ա—306բ-ում: Մաղթելով, որ Երեւանում լոյս տեսնի այս գրուածքի Համահաւաք քննական բնագիրը՝ մենք լոյս ընծայեցինք Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի թ. 1912 Ձեռ-ի բնագիրը (էջ 628—662)՝ «Բազմավէպ» 1981 էջ 57—72:

Այս մաղթանքի իրականացմանը սատարելու համար հրապարակուած ենք գրուածքի մի այլ բնագիր ըստ Ձմմառի վանքի մատենադարանի թ. 183 Ձեռ-ի: Ցանկալի է, որ եզրնիկի աղբիւր լինելու կամ չլինելու հարցն առանց նորագոյն քննութեան չմնայ: Բուն գրուածքը «Հարցումն գեղեցիկ պատասխանեօք հանդերձ խրթնածածուկ բանից»-ն է, Լուսաւորչի կանոնը ձեռագրերում պատահաբար է կցուել:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

[Ձեռ. 83ա]

ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՐԹԵՒԻ

Կանոն երկրորդ երանելոյն՝ սրբոյն Գրիգորի Պարթեւի՝ Հայաստանեայց լուսաւորչի: Հարցումն գեղեցիկ պատասխանեօք հանդերձ խրթնածածուկ բանից: Ունի գլուխս ժա:

- Վանն՝ քահանայից՝ եւ աշխարհականաց՝ ա՛
- Վանն՝ նախանձու Բ
- Վանն մեղաց Գ
- Վանն կենաց Դ
- Վանն դժոխոց Ե
- Վանն կախարդաց Զ
- Վանն սպաննողաց Է
- Վանն կախարդաց Ը
- Վանն դիւահարաց Թ
- Վանն ծննդոց դիւաց Ժ
- Վանն քաջանց Ժա

Սահմանք սրբոյն Գրիգորի Պարթեւի՝ Հայոց լուսաւորչին:

1 Ձեռ. Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի, վրան 18 կէտերով, կրկնուել է ամէն մի էջի վերեւում:  
 2 Կանոն Երկրորդ Երանելոյն:  
 3 Վ.ս (պատիւով), Քիչից (պատիւով):  
 4 Իւրաքանչիւր խորագրից յետոյ՝ վերջակէտ:  
 5 Համարակալուածները հորիզոնական զոյգ պատիւ քանակներ միջեւ են:

ա՞. Քահանայ՝, որ ընդ կնոջ ի քուն է, ի վաղիւն պատարագ մի՛ իշխեսցէ մատուցանել: Եւ աշխարհական, որ ընդ կնոջ ի քուն է, ի վաղիւն օրինաց մի՛ լիցի հաղորդ:

- բ. Հարցումն՝. Ո՞վ է Հայր մահու: Պատասխանի՞. Նախանձ:  
 Հարցումն. Ուստի՞ յայտ է: Պատասխանի. Յայսմանէ՛՝ «Ի նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհս»<sup>10</sup>:  
 գ. Հարցումն. Եւ ո՞վ է մայր մեղաց: Պատասխանի. Ազահութիւն<sup>11</sup>, որպէս<sup>12</sup>

6 Համարակալուած հարցերի թուերը միջին կամ աջ լուսանցքում են:  
 7 Ք-ն զարդագիր է:  
 8 Հրց (պատիւով), առանց կէտի, թէեւ շարունակութեան մէջ այս յապաւումից յետոյ, որ չենք նշելու, մերթ ոչինչ, մերթ միջակէտ, մերթ վերջակէտ:  
 9 Պիս (պատիւով), մերթ միջակէտով, մերթ առանց ոչինչի յապաւումն այսուհետեւ չենք նշելու:  
 10 Իմաստ. Բ 24 «Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհս»:  
 11 ազահութի (պատիւով), բոլոր -ուրիմ վերջայանգով բառերն այսպէս կանոնաւոր յապաւում են, եւ այսուհետեւ չենք նշելու:  
 12 ոպ (պատիւով), այսուհետեւ չենք նշելու:

ասեն՝ «Արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւն է»<sup>13</sup>:

դ. Հարցումն. Ո՞վ է, որ տանի ի կեանսն յաւիտենից<sup>14</sup>:

Պատասխանի. Հեղութիւն, վասն որոյ ասէ հողին սուրբ<sup>15</sup>, թէ «Յո՞վ բնակեցայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս եւ որք դողան ի բանից իմոց»<sup>16</sup>:

ե. Հարցումն. Եւ ով առիթ դժոխոցն:

Պատասխանի. Լրբութիւն, վասն որոյ ասէ՝ «Ոչ այսպէս առեաց զանօրէնն, որչափ զանամօթն»<sup>17</sup>:

զ. Հարցումն. Եթէ կարիցեն կախարդք զբնութիւն արարածոց փոխել:

Պատասխանի. Եթէ հաստատել կարեն, ապա եւ փոխել կարեն:

Հարցումն. Ահա բազում լուաք, եթէ զմարդիկ [83բ] փոխեն ի կերպարանս անասնոց:

Պատասխանի. Ոչ ամենայն ինչ, որ առաջօք է, ճշմարտութիւն ասի, որպէս եւ ոչ ստուեր մարդոյ մարդ ասի. զկերպարանս եւ զնմանութիւն կարեն ցուցանել, բայց ճշմարտութեամբ<sup>20</sup> ոչ կարեն ցուցանել եւ ոչ փոխել զարարածս արարչին, զի որ արարն, նա միայն կարէ փոխել:

Հարցումն<sup>18</sup>. Ն'ա աւանիկ դիրք ցուցանեն, թէ առնէին կախարդքն, զոր ինչ եւ Մովսէս<sup>19</sup> առնէր:

Պատասխանի. Ընդ բարբառ բանի՞ցն նայիցես, թէ՞ ընդ ճշմարտութիւն իրացն. թէ արդարեւ որպէս Մովսէսն առնէր ճշմարտութեամբ<sup>20</sup>, ոչ էր պարտ զՄովսէսի արարեայս առնէր: Ն'ա աւանիկ ճշմարտութիւնն<sup>21</sup> զոչ ճշմարտութիւնն<sup>21</sup> յայտ առնեն, զի կանդնէր մի վիշապն եւ զբազում վիշապս կլանէր, եւ ստուեր եւ նմանութիւն եւ տեղի անդամ

13 Ա Տիմ 2 10 «Արմատ ամենայն չարեաց՝ արծաթսիրութիւնն»:  
 14 սր (պատիւով), որ այսուհետեւ չենք նշելու:  
 15 Եսայի 42 2 «Յո՞ւ հայցայց (ոմամբ)՝ հանգեցայց) եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս եւ որ դողայ (ոմամբ՝ դողան) ի բանից իմոց»:  
 17 Մ. Գրբում այսպիսի խօսք չգտանք:  
 18 Հց (պատիւով):  
 19 Մովսէս, փոքր սկզբնատարով, որ այսուհետեւ չենք նշելու:  
 20 ճշմարտութիւն (պատիւով), այսուհետեւ չենք նշելու այսպիսի յապաւումները, քանի որ կանոնաւոր եւ հետեւողական են:  
 21 ճշմարտութիւն (պատիւով), այսպիսի յապաւումները կանոնաւոր եւ հետեւողական են, այսուհետեւ չենք նշելու:

ոչ երեւէր. ապա մինչ ի կախարդքն դարձան հարուածքն, կեղք եւ խաղաւարտք, յայտնի եղեւ ստութիւն նոցա<sup>22</sup>, եւ ի հարկէ խոստովան եղեն, թէ «Ձեռն Աստուծոյ» է<sup>24</sup>: Բայց թէ կարող լեալ էին<sup>25</sup>, զհարուածսն ի Մովսէս եւ յԱհարոն<sup>26</sup> դարձուցանէին:

Հարցումն. Մովսէսի ոչ կարէին առնել ինչ, զի Աստուած ընդ նմա էր, բայց մեղաւորաց կարեն առնել չար եւ բարի:


Պատասխանի. Ոչ միայն մեղաւորաց չեն ձեռնհաս կախարդք բարոյ եւ չարի, այլ եւ ոչ անասնոց անմտից, բայց զոր Աստուած մատնէ, այլ առանց Աստուծոյ ոչ կարեն սպանանել, զի «Ի տեսնէն<sup>27</sup> են ելք մահու»<sup>28</sup>, «Սպասէ մեղաւորն արդարոյն, այլ տէր<sup>29</sup> ծիծաղեսցի զնօքօք<sup>30</sup> եւ ոչ մատնէ զնա ի ձեռս նորա»<sup>31</sup>: Ն'ա եւ ոչ ճնճողուկ անկանի յորդայթ առանց հրամանի հօր ձերոյ, որ յերկինս է, «Ձի ամենայն ինչ նովաւ եղեւ»<sup>32</sup> եւ Աստուծով<sup>34</sup> անցանէ:

Հարցումն. Կայէն Առանց Աստուծոյ սպան զԱբէլ<sup>35</sup>, եւ սպանողն Կայենի առանց Աստուծոյ սպան զԿայէն, եւ Հերովդէս՝ զՅովհաննէս, եւ ամենայն արդարքն առանց Աստուծոյ [84ա] մեռան յանօրինաց:

Պատասխանի. Ձի թէ<sup>36</sup> լինի մարդ առանց Աստուծոյ եւ մեռանի, ոչ պոռնկորդին Աստուծոյ հրամանաւ լինի, եւ ոչ մեղաւորն Աստուծոյ հրամանաւ մեռուցանէ զարդարն, այլ սատանայ է պատճառ չարեաց: Աստուած<sup>37</sup> հրեշտակաց անքննելի է եւ ան-

22 սց (պատիւով):  
 23 այ (պատիւով):  
 24 է-ն նախորդող այ-ի (պատիւով) հետ միասին է գրուել, ինչպէս այլուր եմ բայի ձեւերը շատ յաճախ իրենց նախորդող բառի հետ են:  
 25 լեալէին:  
 26 յախարոն. նոր տողից բացի՝ յատուկ անունները փոքր սկզբնատարով են, այսուհետեւ չենք նշելու:  
 27 տէ (պատիւով):  
 28 Սաղմ Կի 21 «Ի տեսնէն են ելք մահու»:  
 29 տր (պատիւով):  
 30 Ձեռ-ում այսպէս է:  
 31 սր (պատիւով):  
 32 Սաղմ ԼԶ 12—13 «Սպասէ մեղաւոր արդարոյ եւ կրճտէ ի վերայ նորա զատամուռն իւր, այլ տէր ծիծաղեսցի զնովաւ»:  
 33 Յովհ Ա 3 «Ամենայն ինչ նովաւ եղեւ»:  
 34 ալ (պատիւով):  
 35 գաբէլ:  
 36 Ծրուել նշանի տակ էջի միջին լուսանցքում է, նոյն նշանը նախորդող Ձի-ի աջակերեւում էլ է:  
 37 Ած, Ա-ն եռատամ գլխադիր նօսրգիր:

23-83



հասանելի ամենից, զի որ քննել զձով, մե-  
ռանի<sup>38</sup> : Լինելութեան<sup>39</sup> պատճառ Աստուած  
է, զի աւրհնեաց<sup>40</sup> ի սկզբանէ զարդարն անել  
եւ բազմանալ, եւ ի մերձեանալ արուին յէզն՝  
Աստուծոյ հրաման կատարի. լինի անուսն  
ըստ նախակարգ հրամանի Աստուծոյ : Աս-  
տուած է պատճառ լինելութեան եւ ոչ սա-  
տանայ<sup>41</sup>, որպէս ասէ՝ «Առանց Աստուծոյ  
եղեւ եւ ոչ ինչ»<sup>42</sup> : Սատանայ<sup>43</sup> հրապուրանաց  
է պատճառ : Նոյնպէս եւ մահու հրաման  
յԱստուծոյ<sup>44</sup> է. «Յորում աւուր ուտիցես,  
մեռցիս»<sup>45</sup>. եկեր եւ մեռաւ : Եկն Քրիստոս<sup>46</sup>  
եւ եսպան զմահ եւ կենդանութեան զմարդիկ :  
Ինքն Քրիստոս իւրով կամօքն մեռաւ յանօրի-  
նացն եւ արդարոցն թոյլ ետ մեռանիլ [յ]ամ-  
բարչտացն, զի ուրախացին յարքայու-  
թեանն<sup>47</sup>, որպէս եւ գրեալ է՝ «Ընդ Քրիստոսի  
մեռանին, ընդ նմին եւ թագաւորեցեն»<sup>48</sup> :  
Արդ՝ այնք, որք զԱստուծոյ փառս եւ զպատիւ  
արարչութեանն սատանայի<sup>50</sup> տան, ի հուր  
գեհեանին է ժառանգութիւն նոցա<sup>51</sup> :

Ը. Հարցումն. Եթէ կարիցեն կախարդք  
որդիս տալ ամլոց եւ ի մէջ ստնտուկս<sup>52</sup> բարիս  
առնել :

Պատասխանի. Ամլութեան բազում  
պատճառք են. այն որ [յ]Աստուած<sup>52ա</sup> ար-  
գելեալ է, չէ ոք, որ նմա ձեռնհաս կարէ  
լինել, ոչ կախարդ եւ ոչ բժիշկ : Բայց եթէ  
պատճառք ցաւոց են ինչ, զայն կարող են  
բժիշկը ուղղել յԱստուծոյ ազդեցութեամբն  
զեղովք, այլ առանց Աստուծոյ թէ եւ ամե-  
նայն բժիշկը եւ կախարդք ժողովէին, ոչ

<sup>38</sup> Ս. Գրքում այսպիսի խօսք չկայ :  
<sup>39</sup> լինելութիւն (պատիւով) :  
<sup>40</sup> անհաց (պատիւով) :  
<sup>41</sup> ստյ (պատիւով), ստ (պատիւով) —ի տակ գիծ :  
<sup>42</sup> Յովհ. Ա. 3 «Առանց նորա եղեւ եւ ոչ ինչ որ ինչ  
եղեւն» :  
<sup>43</sup> Լրիւ գրուած, ասա—ի տակ գծիկ :  
<sup>44</sup> յայ (պատիւով) :  
<sup>45</sup> Ծննդոց Բ. 17 «Յորում աւուր ուտիցէք ի նմանէ,  
մահու մեռանիցիք» :  
<sup>46</sup> Բս (պատիւով) :  
<sup>47</sup> յարքայութեան (պատիւով), նման յապաւումները,  
որոնք կանոնաւոր եւ հետեւողական են, չենք նշելու :  
<sup>48</sup> Քգրեցեմ (պատիւով) :  
<sup>49</sup> Բ. Տիմ. Բ. 11 «Ընդ նմա մեռաք, ընդ նմին եւ  
կեցցուք» :  
<sup>50</sup> սայի, սա—ի տակ գծիկ :  
<sup>51</sup> նց (պատիւով) :  
<sup>52</sup> մէջստնտուկս, Երուսաղէմի ձեռ. (թ. 1912),  
էջ 637՝ գմէջ սեմքուկս :  
<sup>52ա</sup> ամ գառ (պատիւով) :

կարէին Սառայի որդի տալ<sup>53</sup>. զոր ձեռն վեր-  
նոյն փակեալ է, չէ ոք որ լուծանէ :

Հարցումն. Դիւահարութեան պատճառ  
ի՞նչ է մարդկան :

Պատասխանի. Վասն հպարտութեան  
[84բ] լինի, զի որդի, որ մտաւարժ է եւ  
իմաստուն, դան ոչ ըմպէ, իսկ որ ամիտ է,  
հանապազ դանալից է :

Հարցումն. Մեղաւորք վասն մեղաց  
տանջին, իսկ տղայոց անմեղաց զի՞ տիրիցեն  
դեւք :

Պատասխանի. Չամենայն մարդ յորդէ-  
զութիւն կոչէ Աստուած, որպէս զԽարա-  
յէն<sup>54</sup>. «Նա է որդի իմ անդրանիկ՝ Խարա-  
յէլ»<sup>55</sup> եւ «Որդիս ծնայ [յ] եւ բարձրացուցի»<sup>56</sup> :  
Արդ՝ եթէ փակեալքն ընդ օրինօք որդիք  
կոչին, ո՞րչափ եւս առաւել՝ աղատեալքս.  
զոր ասէ իսկ՝ «Ետ նոցա իշխանութիւն որդիս  
Աստուծոյ լինել»<sup>57</sup> : Արդ՝ զի իբրեւ յորդիս  
մատուցեալ է ի մեղ Աստուած, առ երբեմն  
խրատել՝ զանասունս<sup>57ա</sup> մեր, երբեմն զան-  
գաստան եւ զայգիս մեր, զի հայելով ընդ  
այն՝ ի միտ առցուք մտանել ընդ լծով երկե-  
զի՝ ծառայել տեսնն<sup>58</sup> : Ապա մինչ այսու եւս  
ոչ խրատիցիմք, ի մեղ առաքէ տանջանս պէս-  
պէս ցաւովք եւ խեղութեամբ, մատնէ եւ  
զիւաց զտղայս մեր, զի ի միտ առցուք՝ «Թէ  
արդարն հաղիւ կեցցէ, իսկ ամբարիշտն ուր  
պարի»<sup>59</sup> : Եւ<sup>59ա</sup> տղայոցն յայն սակս պատահի,  
զի մ'ի արդարն ի բարիս զործելոյ դաւարես-  
ցէ, եւ մ'ի մեղաւորն ի մեղս յամել կարացէ.  
եւ չէ այսմ պարտական, այլ շար զործք  
մարդկան բարկացուցանեն զԱստուած, եւ  
այնպիսի ցասմամբ մատնէ զտղայս մեր  
զիւաց, զի որպէս այլոց հաւատովք բժշկեաց  
զանդամարլոյծն եւ շնորհեաց նմա թողութիւն  
մեղաց, նոյնպէս եւ այլովք տանջանօք անէ  
յերկիւղ զբազումս, է՛ զի անմեղ տղայովք եւ  
է՛ զի մեղուցելովք, որպէս եւ ինքն միայն  
զիտէ բարեբարն. եւ ոչ եթէ ի դատապար-

<sup>53</sup> Ծն. Իս. 2 «Ծնաւ Սառա Աբրահամու որդի ի ձե-  
րութեանն» :  
<sup>54</sup> զիւլիմ (պատիւով) :  
<sup>55</sup> Ելք. Դ. 22 «Որդի անդրանիկ իմ Խարայէլ» :  
<sup>56</sup> Ես. Ա. 2 «Որդիս ծնայ եւ բարձրացուցի» :  
<sup>57</sup> Յովհ. Ա. 12 «Ետ նոցա իշխանութիւն որդիս Աս-  
տուծոյ լինել» :  
<sup>57ա</sup> Եզնիկ (1826 թ.) 82 «հարկանէ զանասունս...» :  
<sup>58</sup> տմ (պատիւով) :  
<sup>59</sup> Առ. Ժ. Ա. 31 «Եթէ արդարն հաղիւ կեցցէ, իսկ  
մեղաւորն եւ ամպարիշտն ո՞ւր գտանիցին» :  
<sup>59ա</sup> և :

տութիւն ինչ մարդոյ ոգւոյն լինի տանջումն  
զիւաց, այլ առաւել յարգահատութիւն, մա-  
նաւանդ թէ անմեղ ոք իցէ եւ վասն այլոյ եր-  
կեղի ի միտսն արկանել մատնի յայնպիսի  
տանջանսն, զոր իբրեւ զմտրակ կախեալ ի  
տուն իշխանին զոր [85ա] հուրեցուցեալ  
զտեսողան, նոյնպէս եւ տղայոցն լիկանսն ի  
զղջումն անէ զմեղաւորսն : Այլ, ասեն,  
կախարդք յղեն զըզեւն<sup>60</sup> եւ հանեն : Կա-  
խարդք զըզեւս ոչ կարեն հանել. տէրն ասաց՝  
«Սատանայ զսատանայ ոչ հանէ»<sup>61</sup> : Մարդ, որ  
զԱստուած թողու, զսրբութիւն, զպահս,  
զաղօթս եւ ի դիւթս եւ ի կախարդս ապաւինի  
եւ քակէ զյոյսն յԱստուծոյ, թոյլ տա[յ]  
Քրիստոս զիւաց բնակիլ ի նմա եւ տանջել  
զնա եւ պահանջել զորդի նորա եւ տանել ի  
դժոխս արպէս զողիս անօրինացն : Կախարդք  
զիւաց բազինք են եւ չեն համարեալ ի քրիս-  
տոնեայս : Ոչ զոք ի կախարդաց կարես տե-  
սանել անցաւս եւ անդեւս. ն'ա եւ տեսանեմք  
զկախարդան միշտ լիկեալ ի դիւացն եւ մա-  
նաւանդ մոլիքն, զի նախ ինքեանք մոլին եւ  
զիւահարին ի դիւացն կատաղութենէ եւ խոս-  
տանան տալ բժշկութիւն յուսացելոցն ի նո-  
սա<sup>62</sup>, բայց ոչ են ձեռնհաս, զի ի ձեռս Աս-  
տուծոյ է ամենայն, որպէս ասէ մարգա-  
րէիւն<sup>63</sup> «Ես սպանանեմ եւ ես կեցուցա-  
նեմ»<sup>64</sup> : Ոչ իշխէ սատանայ ի մարդ մտա-  
նել<sup>65</sup>, բայց հրամանաւ Աստուծոյ, եւ ոչ լով  
ի մարդ, այլ եւ ոչ ի դեռունսն, բայց փորձիչ  
եղ Աստուած զսատանայ. եւ փորձէ նովաւ,  
որպէս ասաց մարգարէիւն՝ «Արկ զարծաթ ի  
բովս, եթէ փորձիցէ», որպէս վասն նոցա  
փորձեցաւ Քրիստոս ի սատանայէ<sup>66</sup> եւ ձեզ  
պատուիրեաց Քրիստոս յաղօթս կալ, չմտա-  
նել ի փորձութիւն. այլ եւ զմեղան համբե-  
րողս : Այլ զի պատերազմասէր է շարն եւ  
խնդրէ կորուսանել զամենայն, Քրիստոս  
ասաց՝ «Ողորեաց սատանայ մաղել զձեզ»<sup>67</sup> :

<sup>60</sup> զը-ըզեւսն, ը-ն անտարակոյս տողադարձի պատ-  
ճառով է :  
<sup>61</sup> Մտթ. Ժ. Բ. 26 «Եթէ սատանայ զսատանայ հանէ,  
յանձն իւր բաժանեցաւ» : Յիսուս չի ասել այնպէս,  
ինչպէս զբուսածքում է :  
<sup>62</sup> նս (պատիւով) :  
<sup>63</sup> մրգրէիւն (պատիւով) :  
<sup>64</sup> Երկ. Օր. Լ. Բ. 39 «Ես սպանանեմ եւ ես կեցուցա-  
նեմ» :  
<sup>65</sup> մրտա-միլ :  
<sup>66</sup> սոյլէ, ստ-ի տակ գծիկ :  
<sup>67</sup> Ղուկ. Ի. Բ. 31 «Սատանայ խնդրեաց զձեզ խարբալել  
իբրեւ զցորեանն» :

Ըստ խնդրելոյն սատանայի ետ զնոսա ի փոր-  
ձութիւն, եւ իշխանութեամբն, զոր առեալ  
էին ի Քրիստոսէ, զնացին ի վերայ<sup>68</sup> իժի եւ  
քարբի եւ կոխեցին եւ հարին զգետնի : Եւ<sup>69</sup>  
ընդդէմ Յովրայ պարզեաւբաշխ եղեւ սատա-  
նայ յասելն Աստուծոյ ցատանայ՝ «Նայե-  
ցա՞ր [85բ] ընդ Յովր»<sup>70</sup>, եւ ետ զնա եւ զոր-  
դիս նորա եւ զստացուածս նորա : Ետ յաղ-  
թութիւն Յովրայ վասն արդարութեանն,  
հար զշարն եւ յաղթեաց նմա եւ հռչակեցաւ :  
Այլ Աստուած տայ ի փորձութիւն զամենայն  
ոք. վիայէ մկրտիչն, ասէ՝ «Գայ այլ զկնի իմ,  
որոյ հեծանոցն ի ձեռին իւր՝ սրբել զկալ իւր  
եւ ժողովել զցորեանն յշտեմարանն եւ զյարդն  
այրեսցէ անչէջ հրով»<sup>71</sup> : Յայտ արար համա-  
ռօտ, թէ որպէս շեղջ կալոյ առանց հողմածին  
աւղոյ չսրբին, նոյնպէս եւ մարդ առանց յաղ-  
թելոյ սատանայի ոչ կարէ մտանել յարքայու-  
թիւնն : Եւ զէնք սատանայական պատերազմի  
այս են՝ կախարդութիւն, թովչութիւն, դի-  
ւահարութիւն, աստեղադիտութիւն, եւ նը-  
մանք նոցին, զոր ասէ՝ «Մեզս մահու չափ,  
այս են՝ հայհոյութիւնք : Ամենայն մեղաց թո-  
ղութիւն կայ ապաշխարութեամբ, բայց վասն  
զուրկիւն կայ ապաշխարութեամբ, բայց վասն  
սորա համառօտ վճիռն ետ տէրն մեր Քրիս-  
տոս՝ «Որ զհոգին սուրբ հայհոյէ, մի՛ թողցի  
նմա»<sup>72</sup> : Վասն այսորիկ ասէ «Մ'ի թողցի», զի  
ոչ լինի արժանի ապաշխարութեան : Որպէս  
հովիւ, զի թափէ զոչխար ի գաղանէ եւ  
տեսանէ զորովայն պատառեալ, թողու զգէշն  
ի գաղանն եւ ի բաց զնա[յ], նոյնպէս անտես  
աւնէ հովիւն Քրիստոս եւ թողու զհայհոյիչ  
հոգւոյն սրբոյ : Վասն որոյ ասէ առաքեալ<sup>73</sup>.  
«Կամակար մտօք՝ եթէ յանցանիցեմք յետ  
ընդունելութեան զիտութեան, այնու հետեւ  
անօղուտ է վասն մեղաց պատարադ»<sup>74</sup> : Եւ<sup>75</sup>

<sup>68</sup> վր (պատիւով) :  
<sup>69</sup> և :  
<sup>70</sup> Յովր. Ա. 8 «Նայեցա՞ր մտովք քովք ընդ ծառայ իմ  
ընդ Յոր» :  
<sup>71</sup> Մտթ. Գ. 11—12 «Որ զկնի իմ գայ, հզաւբազոյն է  
քան զիս, եւ ես չեմ բաւական... որոյ հեծանոցն ի  
ձեռին իւրում, եւ սրբեցէ զկալ իւր եւ ժողովեցէ  
զցորեանն ի շտեմարանս իւր եւ զյարդն այրեսցէ անչէջ  
հրով» :  
<sup>72</sup> Մարկ. Գ. 29 «Որ հայհոյեցէ զհոգին սուրբ, ոչ  
ունիցի թողութիւն» :  
<sup>73</sup> առքլ (պատիւով) :  
<sup>74</sup> պոզ (պատիւով) :  
<sup>75</sup> Երբ. Ժ. 26 «Կամակար մտօք եթէ յանցանիցեմք  
յետ ընդունելութեան զիտութեան ճշմարտութեանն,  
այնուհետեւ ոչ եւս պիտոյ է վասն մեղաց պատարադ» :  
<sup>76</sup> և :

ամենայն ոք, որ քրիստոնեայ է եւ, լուսաւորեալ է յաւազանէն հողուով սրբով եւ ապստամբէ յԱստուծոյ, ի ձեռս է սատանայի եւ հալածական առնէ զսուրբ հոգին յինքնէ եւ դիւր զարի եւ պէսպէս հմայիւք եւ կախարդութեամբ, այնպիսին չլինի ապաշխարութեան արժանի, եւ չտայ նմա սատանայ թոյլ ապաշխարել. վասն այնորիկ գրեցան, թէ «Են մեղք, որ մեղք են, եւ է, որ մահու չափ է»<sup>77</sup>: Ըստ որում եւ վասն Յուդայի [86ա] ասաց Քրիստոս, թէ «Միւր է ձէնը սատանայ է»<sup>78</sup>. Եւ թէպէտ եւ գողութեամբն ջանացաւ սատանայ առնել զնա բազին, սակայն առանց Քրիստոսի ոչ կարաց մտանել, այլ յորժամ ետ զըպատանն<sup>79</sup> եւ ասէ՛ «Ար'ա, զինչ առնելոց ես»<sup>80</sup>, «Եւ տալոյն զպատանն ապա եմուտ ի նա սատանայ»<sup>81</sup>: Եւ դիւահարք իսկ, որ տանջէին ի դիւաց, թէ ոչ պահպանող գողութեանցն պահէր, չարաչար ախտին խեղդէին զնոսա: Այլ ոչ լոկ զդիւահարսն, այլ եւ զիւրեանցն<sup>82</sup> իսկ պաշտօնեայն, թէ ոչ Աստուծոյ ահն պահէր, ազգի ազգի խեղութեամբք խեղդէին, բայց չեն ձեռնհաս եւ մտաբերել չիշխեն:

Ժ. Հարցումն. Ծնունդք են դիւաց եւ մահ, աճեն եւ պակասեն:

Պատասխանի. Նախ զայն տեսցուք, թէ գո'ն այլ արարածք բանաւորք, քան զհրեշտակս եւ զմարդիկ եւ զդեւս, եւ ապա եկեսցուք յայն, թէ իցեն՝ դիւաց կէս մարմնաւորք, եւ կէս՝ անմարմինք: Զի չեն այլ արարածք բանաւորք, քան զերբը ջոկ, յաստուածային գրոց եւ ի բնութենէ արարածոց յայտ է: Թէպէտ եւ են յուշկապարիկք եւ համբարուք եւ պարիկք եւ պայք, ըստ կարծեալ մտաց մարդկան ասին եւ ոչ ըստ բնութեան, զի դիւաց է կերպարանս ցուցանել, եւ մարդիկ զկերպարանս անուանադրեն: Որպէս յորժամ քաղաքք եւ գիւղք աւերեսցին, եւ անդ դեւք բնակեսցեն եւ կերպս կերպս զանձինս ցուցանիցեն, եւ մարդկան կերպի երեւման անուանս եղեալ՝ կոչեն զոմն յուշ-

<sup>77</sup> Ա Յովհ Ե 16 եւ 17 «Են մեղք, որ մահու չափ են»:  
<sup>78</sup> Յովհ Զ 71 «Միւր է ձէնը սատանայ է»:  
<sup>79</sup> զը-տառն, տողազարձով:  
<sup>80</sup> Յովհ ԺԳ 28 «Արդ որ զինչ առնելոց իցես, արա՛ վաղվաղակի»:  
<sup>81</sup> Յովհ ԺԳ 27 «Եւ յետ պատառոյն ապա եմուտ ի նա սատանայ»:  
<sup>82</sup> զիւրք (պատիւով):

կապարիկ [ ]<sup>83</sup>, զոմն՝ համբարու, նոյնպէս եւ գրոց՝ զանուանս նոցա առ ի նշանակելոյ զաստուծութիւն աւերածի աշխարհի, յուշկապարկաց ասեն բնակել յաւերակս, զի ի յոյն լեզուն յուշ [ ] կապարիկն<sup>84</sup> ի<sup>85</sup> շացուլ թարգմանի: Արդ ցուցանե՛ն, եթէ գտա [85բ] նի իշացուք ի Բաբելոնի. ուրեմն յայտ է, եթէ լոկ անուանք են եւ ոչ տեսակք, եւ դիւրք ըստ սովորութեան մարդկան խօսից անուանեցին զդեւս, որ յաւերակն Բաբելոնի բնակեալ են, եւ նոյն աղբեղութեամբ դիւացն բարբառնջեն մարդիկ. զծովացուլն ի կուսէ ասեն ելեալ եւ զպայն ի դետոյ եւ զառաւելոյն ի շանէ եւ զխանդիրն յիշոյ եւ զնահանդն<sup>86</sup> ի ձիոյ. եւ այսք ոչ եթէ տեսակք ինչ, այլ անուանք եւեթ են հեթանոսական հոսպաշտիցն, զի որք զդեւան պաշտէին, ի դիւացն հաչէին իրբեւ զչուն, եւ նոյն մոլորութեան սովորութիւն կալաւ զերկիր, եւ ոչ ի քրիստոնէից զարձան ի բաց ի դիւացաշտ մոլեղութեանն, եւ ոչ ոք էր յառաջնորդաց, որ հովուէր ըստ քարոզութեան աւետարանին: Զայս զիս՝ որդ ոչ իմանայ, թէ ի մարմնաւորէ անբերելոյ ոչ ինչ ելանէ, եւ յանբերելոյն մարմնաւոր ինչ. ոչ երբէք ի մարդկանէ ելեալ պայն, զորմէ ասեն, թէ երես ածէ, եւ ոչ ի կովուց՝ ծովացուլ եւ ի ծովակի բնակեալ, զի ցամաքային մարմնաւորի ոչինչ է հնար ի ջուրս բնակիլ, եւ ոչ ջրայնոյ՝ ի ցամաքի. եւ ոչ ի շխան ինչ եղեալ, թէ ընդ անբերելոյ գողութիւնս կացցէ. եւ զոր շխան կոչեն, թէ վիրաւորս պատերազմի լիզեն, եւ ողջանան. այն բարբառնջանք հեթանոսաց են եւ պառաւանց ա[ռ]ասպելք<sup>86ա</sup>, մանաւանդ թէ դիւաց իմն մոլորութիւն:

Այլ վիճեալ պնդին, թէ եւ մերումն զծովացուլ ձայն հանապազ լսեմք, եւ ոմն՝ թէ զպայն իմ իսկ աչօք տեսեալ է, է ոմն՝ զի զառաւելոյն իմ իսկ տեսեալ է լիզելով. եւ այսպէս յամառին որպէս հեթանոսս եւ զայն ոչ իմանան, թէ դեւք լինին ի կերպարանս եւ հանեն ձայն ահագին. եւ առաքեալ ասէ՛ «Սատանայ կերպարանի ի հրեշ[87ա]տակ լու-

<sup>83</sup> յուշկապարիկք, բայց եզակին պարտադիր է զամն-ի պատճառով, ինչ. համբարու:  
<sup>84</sup> յուշկապարիկն:  
<sup>85</sup> Այսպէս առանձին, բայց պէտք է կարգաւ իշացուլ:  
<sup>86</sup> Այսպէս, բայց պէտք է կարգաւ զմիանգն:  
<sup>86ա</sup> արասպելք:

սոյ»<sup>87</sup>, ո՞րչափ առաւել եւս յանասնոց կերպարանս՝ ի զարհուրեցուցանել զմարդիկ: Ոչ այդպէս ասեն, այլ առաջին ժամանակսն զխոցս պատերազմին ողջացուցին լեզուովն. անմիտ, արդ զի՞ չբժշկեն, ո՞չ նոյն պատերազմուք: Եւ<sup>88</sup> արդէն ասեն՝ յայն ժամանակ դիւացազունք էին: Արժան է քրիստոնէից այնպէս խօսել: Զի՞նչ իցեն դիւացազունքն՝ անմարմինք են, թէ՞ մարմնաւորք. յայտ է, թէ մարմնաւոր մարդիկ. զմարդկան ուրուականս ի պաշտօն առեալ՝ դիւս անուանեցին: Ապա եթէ անմարմինք էին, յայտ է, թէ անմարմնոյն չէ մարթ ընդ կանայս ամուսնանալ, զի թէ այնմ հնար էր ծնուցանել, բայց ոչ էր հնար, զի որ անմարմինն է, նոյն եւ անսերմ է, զի սերմ մարմնաւորաց է եւ ոչ անմարմնոց: զի որպէս ոչ գոյ ծնունդ դիւաց, նոյնպէս ոչ գոյ մահ. թէպէտ եւ անմահ աստուածութիւն է, սակայն անմահութիւն չընորհեաց հրեշտակաց եւ որդւոց մարդկան: Եւ<sup>89</sup> դիւաց ոչ աճումն ունի եւ՝ ոչ ծախումն, բայց մարդկան է աճումն ամուսնութեամբ եւ մեռանիլ վասն պատուիրանազանցութեան մարմնով եւ ոչ հողով: Եւ<sup>90</sup> այլ արարած ոչ գոյ, որով կերպարանել կարէ, ոչ վիշապ եւ ոչ այլ ոք, բայց հրեշտակք եւ դեւք:

Ժա. Հարցումն. Քաջք անբերելոյ արարածք են Աստուծոյ. զպատերազմունս նոքա հարկանեն, զորս էրէից նոքա հարկանեն եւ զարմտիս կալոց նոքա կրեն եւ զգինիս ի հնձանաց, որպէս վիշապք զտոհմականս անդէոց, ծծեն:

Պատասխանի. Այսպիսի յիմարութեամբ լցեալ է երկիր: Միթէ մարթիցէ՞ զայսպիսիսն քրիստոնեայն ասել: Ոչ քաջ լեալ է երբէք եւ ոչ վիշապ: Վիշապ բառ է. որ ինչ մեծ է յերկրի, վիշապ ասի ըստ գրոց, թէ «Դու փշրեսցեր զգլուխ վիշապին ի վերայ ջուրց»<sup>90</sup> [87բ], որպէս մարդ մեծ անձն եւ յաղթանդամն սկսայ ասի:

Հարցումն. Ասեն՝ քաջաց եւ վիշապաց տեսարք են ի լերինս բարձունս եւ բնակութիւնք, եւ զաղէկ'ս անդր<sup>90</sup> կապեալ ունին ի

<sup>87</sup> Բ Կորն ԺԱ 14 «Սատանայ կերպարանի ի հրեշտակ լուսոյ»:  
<sup>88</sup> և:  
<sup>89</sup> Մաղժ ԶԳ 14:  
<sup>90</sup> զաղէկս՝ (եւ միւս տողում) անդր:

Հոռմ եւ զԱրտաւազը՝ ի Մասիս եւ զԱրուանդ՝ ի գետս եւ ի մառանս:

Պատասխանի: Յորդուց մարդկան կենդանի են Ենովք եւ Եղիայ, այլ ամենեցուն զմահ ճաշակեալ է: Բայց մոլորութիւն դիւաց խաբեաց զդիցապաշտան հայոց, թէ զԱրտաւազը ոմն արդեւեալ է ի վիշապաց ի Մասիս եւ է կենդանի եւ նա ելանելոց է եւ զաշխարհ ունելոց. եւ որում յանմիտ իշխանաց հայոց հարցեալ զ[ը]դճապատումն<sup>91</sup> հմաւորականս, թէ ե՛րբ լինիցի Արտաւազը զալ ելանել ի կապանաց, եւ նոցա ասացեալ՝ եթէ ոչ կամիս զեկանելն նորա հրաման տուր ընդ ամենայն աշխարհս հայոց դարբնաց, որ օր նաւասարդի է, ամենայն դարբին կուանաւ կոփէ ի վերայ սալի իւրո[յ]<sup>92</sup>, եւ երկաթք Արտաւազընայ անդէն հաստատին. զնոյն հրաման կատարեն, այժմ ամենայն դարբին կոփէ կուանաւ իւրով ի վերայ սալի: Սոյնպէս մեծացուցանէ սատանայ առ աչօք զվիշապն, զի յորժամ ահագինք երեւեսցին, առցեն զնա ի պաշտօն, թէ նահանգ<sup>93</sup> ինչ իցէ գետոց կամ շահապետ է: Յետ կարծեցուցանելոյն ինքն կերպարանի ստուերաձեւ երեւմամբ ահեղաձեւ տեսիլ եւ զարհուրեցուցանել կերպարանի կամ վիշապ կամ նահանգ<sup>94</sup> կամ շահապետ, զի այնու զմարդիկ յարարէին ապստամբեցուցէ. զի թէ էր նահանգ<sup>95</sup> մարմնաւոր, ոչ երբեմն կնոջ պէս ցուլ անուն անուանեն, ոչ մերթ մարդ երեւէր եւ մերթ օձ, որով զաւճապաշտութիւն<sup>96</sup> հնարեցաւ մուծանել յաշխարհս: Նոյնպէս՝ եւ ոչ վիշապն ոչ մի անդամ<sup>97</sup> վիշապ երեւէր, մերթ՝ աւճ<sup>98</sup>, մի անդամ<sup>99</sup> մարդ, որպէս ցուցաքն: Իսկ թէ մարմնաւոր ինչ է, ապա փոխի ոչ, [88ա] այլ թէ ի կալս ջորի ոք երեւին եւ անբերելութանս, եւ ի դաշտս երազ ազդ<sup>97</sup> ձգին, եւ ընթանան զհետ երէոց, դեւք կերպարանին առ ի մոլորեցուցանելոյ զմարդիկ:

<sup>91</sup> զզճապատումն:  
<sup>92</sup> իւրաց:  
<sup>93</sup> Ոսիանգ:  
<sup>94</sup> Ձեռ-ում՝ իսկ աւճապաշտութիւն:  
<sup>95</sup> միանգամ:  
<sup>96</sup> աւճ:  
<sup>97</sup> Երկու բառով գրուած, բայց երկուսի միջեւ դէպի վեր ուղղուած մի բարակ գծիկ կայ, եթէ երբեք թղթի մի բիծը չէ: